Արձանագրություն N 3
ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան 25 հունվարի 2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Ալոյանը,
Հանձնաժողովի անդամներ Ա. Սիմոնյան, Ն. Ավետյանը, Ս. Նազարյանը, Տ. Բոյախչյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Համաձայն «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.9 կետի՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը (20.01.2022թ.) և մասնակիցներին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ այն է 21.01.2022թ. ժամը 18:00-ն շտկել անհամապատասխանությունները.

Մասնակից կազմակերպությունների կողմից առ 21.01.2022թ. ժամը 18:00-ի դրությամբ անհամապատասխանությունները շտկվել են, բացառությամբ <<Երվադա>> ՍՊԸ-ի, որը չի շտկել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հանձնաժողովի կողմից նշված անճշտությունները և Չափաբաժին 2-ի համար ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի <<ընդամենը>> տողում հաշվարկված չէ չնախատեսված ծախսերի համար հաշվարկված գումարը:

Հանձնաժողովի որոշումը

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

1. <<Երվադա>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել անհամապատասխանությունները չշտկելու հիմքով:
2. Հիմք ընդունելով ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.6 կետը, հանձնաժողովը <<Արտեզիա>>, <<Արազեն հայ-գերմանական ՀՁ>>, <<Ֆլորա էներջի>> ՍՊԸ-ներին, <<Շին Մոնտաժ Տրանս>> և <<Նարսեր Շին>> ՍՊԸ-ների կոնսորցիումին հրավիրում է գնի նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի կունենա 27.01.2022 թվականին ժամը 11:30-ին, Ջրային կոմիտեի շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա):

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ _____ Գ. Ալոյան

անդամներ _____ Ն. Ավետյան

_____ Ա. Սիմոնյան

_____ Տ. Բոյախչյան

_____ Ս. Նազարյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան